

ՀՀ տարածքում գործող  
բոլոր հաշվետու թողարկողներին

*Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների կողմից վերջին ժամանակներս թողարկման գործընթացում հանդիպող հետևյալ խնդիրների և թերացումների վրա:*

**Ծրագրային ազդագրի՝ գրանցման ենթակա լրացումները Կենտրոնական բանկ չներկայացնելը.**

Թողարկողը ծրագրային ազդագրի հիման վրա կարող է շարունակական թողարկում իրականացնել, եթե յուրաքանչյուր հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակման պահին ծրագրային ազդագրի բոլոր փոփոխված տեղեկությունները, որպես լրացում, գրանցվել և հրապարակվել են: Օրինակ՝ կառավարման մարմնի փոփոխությունները, կիսամյակի ավարտից հետո՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և այլ էական տեղեկատվությունը «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 4/04) սահմանված կարգով պետք է որպես ծրագրային ազդագրի լրացում ներկայացվեն ՀՀ ԿԲ գրանցման:

Միևնույն ժամանակ, ծրագրային ազդագրի շրջանակներում տեղաբաշխումն սկսելուց հետո մինչև յուրաքանչյուր տեղաբաշխման ժամկետի ավարտը, ծրագրային ազդագրում ներառվող տեղեկությունների էական փոփոխությունների, նոր էական հանգամանք կամ փաստ ի հայտ գալու, ինչպես նաև ազդագրում էական անճշտություն, թերություն հայտնաբերելու դեպքում թողարկողը կամ տեղաբաշխողը պարտավոր է ԿԲ գրանցմանը ներկայացնել ազդագրի լրացում:

*Նշվածը Կանոնակարգ 4/04-ի Գլուխ 9.1-ի 21.4 և 21.9 կետերի պահանջ է:*

## **Տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացման գործընթացի խախտում.**

Հրապարակային տեղաբաշխումը սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, թողարկողը պարտավոր է ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին:

*Նշվածը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջ է:*

## **Հրապարակման ենթակա էական փաստերի և տեղեկությունների բացահայտում.**

Թողարկող Ընկերությունները պարտավոր են Կանոնակարգ 4/04-ով սահմանված ժամկետներում և կարգով ՀՀ ԿԲ ներկայացնել և հրապարակել Կանոնակարգ 4/04-ի Գլուխ 23-ով սահմանված տեղեկությունները. օրինակ՝ նոր արժեթղթերի թողարկման վերաբերյալ կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները, թողարկողի կառավարման մարմինների անդամների փոփոխության և այլնի վերաբերյալ տեղեկությունները:

*Նշվածը Կանոնակարգ 4/04-ի VI բաժնի դրույթների պահանջ է:*

## **Ծրագրային ազդագրերի կիրառության ժամկետների խախտում.**

Գրանցված ծրագրային ազդագրի հիման վրա նախատեսվող յուրաքանչյուր հերթական տեղաբաշխման ժամկետ սահմանելուց առաջ հարկավոր է հավաստիանալ, որ տեղաբաշխման սահմանված ժամկետը չի գերազանցում գրանցված ծրագրային ազդագրի կիրառության ժամկետը:

*Նշվածը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ է:*

## **Ազդագրի ձևի և բովանդակության նկատմամբ պահանջների խախտում:**

Ազդագիրը կազմելիս անհրաժեշտ է առաջնորդվել Կանոնակարգ 4/04-ով սահմանված պահանջներով՝ պահպանելով կանոնակարգի կետերի և ենթակետերի հերթականությունն ու ամբողջականությունը:

Նշվածը Կանոնակարգ 4/04-ի III բաժնի դրույթների պահանջ է:

Միաժամանակ Ընկերության կողմից էական փաստերը և տեղեկությունները ՀՀ ԿԲ կայքում հրապարակելու օպերատիվությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք էական փաստերը և տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնել և հրապարակել հերթական համարակալմամբ, մասնավորապես՝ փաստաթղթին տալ ֆիքսված անվանում. *փաստաթղթի հերթական համարակալում\_փաստաթղթի անվանում\_ներկայացման ամսաթիվ* (օրինակ՝ 01\_Material Facts and Events\_24.02.2017):

Հարկ ենք համարում նշել, որ **ազդագրի պայմանների խախտումները կարող են հանգեցնել ներդրողների կողմից վնասների հատուցման քաղաքացիաիրավական պահանջների ներկայացմանը**, ուստի Ձեզ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ նմանապիպ թերությունները և խնդիրները բացառելու ուղղությամբ, այլապես, յուրաքանչյուր նմանապիպ խախտում այսուհետ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կարող է դիտարկվել որպես էական, և կարող են կիրառվել կարգավորիչ միջոցառումներ:

Ֆինանսական վերահսկողության  
վարչության պետ՝

Հրանտ Սուվարյան

Կատարող՝ Անի Մանուկյան  
ՖՎՎ Կորպորատիվ ֆինանսների բաժին  
Հեռ. 010 59 29 75